ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մարտի 2019 թվականի N 64-Ա

ՏԻԳՐԱՆ ՍԱՄՎԵԼԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի դրույթներով, ***որոշում եմ***.

1. Տիգրան Սամվելի Հակոբյանին 2019 թվականի մարտի 19-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի օգնական:
2. Վարձատրությունը՝ ըստ հաստիքացուցակի համաձայն սահմանված պաշտոնային դրույքաչափի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի մարտի 19
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2019 թվականի N 65 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐԺԻԿ ԽԱՉԻԿԻ ՎԱՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-015-0055-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 152,25 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ «ԱՎԱՆԻ ՃԱՇԱՐԱՆ» ՏԱՂԱՎԱՐԻՆ ԵՎ 0,15225 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերով և հիմք ընդունելով Սերժիկ Վարոսյանի 2019 թվականի մարտի 18-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**. քաղաքացի Սերժիկ Խաչիկի Վարոսյանին սեփականության իրավունքով պատկանող (Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ1/0159/02/12 քաղաքացիական գործով վճիռ տրված 2012 թվականի հուլիսի 12-ին), 08-015-0055-0017 կադաստրային ծածկագրով 152,25քմ «Ավանի ճաշարան» տաղավարին և 0,15225 հեկտար մակերեսով հողամասին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, 2-րդ թաղամաս, Գյումրու խճուղի, թիվ 18:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի մարտի 21
Գ. Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2019 թվականի N 67-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի N 45-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի «ա» պարբերության, ***որոշում եմ.***

Անհատ ձեռնարկատեր Սարգիս Սարգսյանին (ՀՎՀՀ՝ 57233281, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.00138/2003-07-31, իրավաբանական հասցեն՝ գյուղ Կրասար 1 փողոց, 39, ընդհանուր մակերեսը՝ 20 քառակուսի մետր) 2019 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների համար տալ ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի մարտի 21
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մարտի 2019 թվականի N 68 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի ԹԻՎ 23-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն որոշման 3-րդ, 4-րդ կետերի, 5-րդ կետի գ) ենթակետի, 7-րդ, 11-րդ և 16-րդ կետերի, 2004 թվականի ապրիլի 22-ի N 633-Ն որոշման 1-ին կետի է ենթակետի, 4-րդ և 5-րդ կետերի ը ենթակետերի, 6-րդ կետի ժ ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստնաի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ , 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետերի դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Ստեղծել քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայություններ և նշանակել քաղաքացիական պաշտպանության ծառայության պետեր՝

1) կապի ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ Բաբկեն Աբրեյանին,

2) ինժեներական ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Կարապետ Հակոբյանին,

3) բժշկական ծառայություն, ծառայության պետ՝ Աշոցքի «Տիրամայր Նարեկի» հիվանդանոցի վիրաբույժ Գառնիկ Մկոյանին,

4) տրանսպորտային ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի օգնական Տիգրան Հակոբյանին,

5) էներգետիկայի ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղի «Աշոցք» էլեկտրական ցանցի գլխավոր ճարտարագետ Ահարոն Նիկողոսյանին,

6) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու անդամ Եսայի Եսայանին,

7) նյութատեխնիկական մատակարարման ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Խաչատրյանին:

2. Առաջարկել՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝ համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունների և պլանների լրամշակման և կազմման նպատակով փաստաթղթերի օրինակելի ձևերը տրամադրել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին և անհրաժեշտության դեպքում ցուցաբերել մեթոդական օգնություն:

2)համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին՝ լրամշակել և կազմել համապատասխանաբար համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունները և պլանները, համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ և մինչև 2019 թվականի ապրիլի 1-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի հաստատմանը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայություններ ստեղծելու և ծառայությունների պետեր նշանակելու մասին» N23-Ա որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի մարտի 21
գյուղ Աշոցք